ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն 0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13՝՝, հեռ.՝ (011) 90 00 02

ՀՀ արդարադատության նախարար
Սրբուհի Գալյանին

Հարգելի՛ տիկին Գալյան,

2026 թվականի հունիսի 7-ին կայացած Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախընտրական ժամանակահատվածում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ստացվել են կոռուպցիոն բնույթի ընտրական հանցանքների վերաբերյալ բազմաթիվ հաղորդումներ:

Նախաձեռնված շուրջ 122 քրեական վարույթները վերաբերել են 2026 թվականի հունիսի 7-ին կայացած Ազգային ժողովի հերթական ընտրություններին մասնակցող հետևյալ քաղաքական ուժերին՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինք, «Հայաստան» կուսակցությունների դաշինք և «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն: Ընդ որում, ենթադրյալ կոռուպցիոն բնույթի ընտրական հանցանքները մեղսագրվել են նշված քաղաքական ուժերի տարբեր ներկայացուցիչների, այդ թվում՝ պատգամավորի թեկնածուների, նախընտրական շտաբների ղեկավարների, պատասխանատուների, այդ քաղաքական ուժերից առաջադրված՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, վստահված անձանց, համակիրների և այլն:

Կարևոր է արձանագրել, որ քաղաքական ուժերի ներկայացուցիչներին մեղսագրվող կոռուպցիոն բնույթի ընտրական հանցանքները՝ մասնավորապես ընտրակաշառք տալը և բարեգործության արգելքի խախտումը, կրել են համատարած բնույթ: Ստացված տվյալների համաձայն՝ դրանք արձանագրվել են ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում՝ առանց բացառության[1]:

[1] Ենթադրյալ հանցանքների տարածքային ընդգրկվածությունը տես կից քարտեզներում:

Նման ընդգրկվածությունը, ըստ ձեռք բերված փաստական տվյալների համակցված գնահատման, առերևույթ առաջ է բերում ողջամիտ կասկած՝ հանցավոր գործողությունների ֆինանսավորման հնարավոր միասնական աղբյուրի առկայության վերաբերյալ, որի պարզաբանման ուղղությամբ իրականացվում՝ են համապատասխան քննչական գործողություններ և անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Ստացված տվյալների համակցված վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ նշված հանցավոր գործունեությունը հիմնականում կրել է նախապես պլանավորված և համակարգված բնույթ: Ընդ որում, դրա կազմակերպման և իրականացման գործընթացներում ներգրավված են եղել համապատասխան մասնագիտական գիտելիքներ և փորձառություն ունեցող անձինք, այդ թվում՝ իրավաբաններ, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների նախկին ներկայացուցիչներ:

Հակակոռուպցիոն կոմիտեում առկա տվյալները վկայում են, որ նշված անձինք, օգտագործելով իրենց մասնագիտական գիտելիքները, փորձը և նախկինում ձևավորված կապերը, ներգրավված անձանց տրամադրել են խորհրդատվություն և մեթոդական ցուցումներ՝ ընտրակաշառքի տրամադրման գործընթացն իրավապահ մարմինների վերահսկողությունից հնարավորինս դուրս կազմակերպելու, հանցավոր գործունեության հետքերը քողարկելու, դրա մասնակիցների միջև դերաբաշխում իրականացնելու և բացահայտման ռիսկերը նվազեցնելու նպատակով:

Մասնավորապես, տրվել են կոնկրետ ցուցումներ՝ հաղորդակցությունը կազմակերպել բացառապես ինտերնետային հավելվածների միջոցով: Միաժամանակ, արձանագրվել է նաև հանձնարարականների տրամադրում այնպիսի վարքագծի վերաբերյալ, որոնք պետք է դրսևորվեն հնարավոր բացահայտման կամ իրավապահ մարմինների հետ շփման դեպքում, այդ թվում՝ միմյանց ճանաչելու փաստը հերքելու, կապերի առկայությունը բացառելու և այլ անձանց վերաբերյալ տեղեկատվություն չտրամադրելու ուղղությամբ:

Բացի այդ, առանձին դեպքերում կիրառվել են այնպիսի տեխնիկական միջոցներ, որոնք նախատեսված են գաղտնալսող սարքեր կամ տեխնիկական վերահսկման միջոցներ հայտնաբերելու համար:

Հանցավոր խմբի անդամները, այդ թվում՝ դրանց մաս կազմող նախկին պաշտոնատար անձինք և նրանց հետ փոխկապակցված անձինք, օգտվելով բնակչության շրջանում ունեցած ճանաչվածությունից և անձնական կապերից, իրականացրել են այսպես կոչված «տարածքային ակտիվի» հավաքագրում և համակարգում՝ ապահովելով ընտրողների նույնականացումը, նրանց քաղաքական նախասիրությունների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, ընտրակաշառքի հնարավոր շահառուների շրջանակի ճշգրտումը, ինչպես նաև ընտրակաշառքի առաջարկման և բաշխման գործընթացների կազմակերպումը:

Ստացված տվյալները նաև վկայում են, որ հանցավոր գործունեության շրջանակներում կիրառվել են բազմաստիճան միջնորդավորված մեխանիզմներ, որոնց նպատակը եղել է այն, որ հնարավորինս տարանջատվի ֆինանսական միջոցների իրական աղբյուրը դրանց անմիջական բաշխողներից, սահմանափակվի հանցավոր գործունեության կազմակերպիչների անմիջական շփումները ընտրողների հետ և ստեղծվի այնպիսի կառավարման համակարգ, որը հնարավորություն կտա վերահսկել գործընթացի

ամբողջական իրականացումը՝ միաժամանակ նվազեցնելով պատասխանատվության ենթարկվելու ռիսկերը:

Հայտնաբերված առավել տարածված հանցավոր սխեմաներն ու ընտրակաշառքի տրամադրման քողարկման մեխանիզմները, մասնավորապես, արտահայտվել են հետևյալ եղանակներով.

- Ընտրակաշառք ստանալու առաջարկն ընդունած քաղաքացիները ձևական հիմունքներով գրանցվել են քաղաքական ուժերի հիմնադիրների, անդամների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից վերահսկվող ընկերություններում՝ ներառյալ տեխնիկական և սպասարկող անձնակազմի տարբեր հաստիքներում, սակայն այդ անձինք փաստացի վճարովի աշխատանք չեն իրականացրել, փոխարենը՝ ներգրավվել են ընտրողների հավաքագրման, նրանց հետ կապի պահպանման, ընտրական գործընթացների ընթացքում վերահսկողության իրականացման, ինչպես նաև ընտրակաշառքի առաջարկման և բաշխման կազմակերպչական աշխատանքներում:
- Նույնանման մեխանիզմ կիրառվել է նաև կուսակցությունների և դաշինքների նախընտրական շտաբների գործունեության շրջանակներում, որտեղ ընտրակաշառք ստանալու առաջարկն ընդունած քաղաքացիները ձևականորեն ընդգրկվել են տարբեր հաստիքներում՝ որպես շտաբի աշխատակիցներ, ակտիվիստներ, համակարգողներ կամ կամավորներ: Իրականում, սակայն, նրանցից շատերը որևէ նախընտրական, կազմակերպչական կամ քարոզչական գործունեություն չեն իրականացրել, իսկ նրանց անվամբ ձևակերպված վճարումները ծառայել են ընտրակաշառքի տրամադրումը քողարկելու նպատակին: Մի շարք դեպքերում նման անձանցից ակնկալվել և պահանջվել է ոչ միայն անձամբ քվեարկել համապատասխան քաղաքական ուժի օգտին, այլև ապահովել իրենց ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների կամ ազդեցության շրջանակում գտնվող այլ ընտրողների մասնակցությունն ու քվեարկությունը: Այդ կերպ ձևավորվել են փոխկապակցված ընտրողների խմբեր, որոնց նկատմամբ իրականացվել է համակարգված վերահսկողություն՝ ընտրակաշառքի տրամադրման դիմաց ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով:
- Օգտվելով տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ առաջադրելու՝ օրենքով նախատեսված հնարավորությունից՝ քաղաքական ուժը ժողովրդավարական ընտրական գործընթացների թափանցիկության, օրինականության և հանրային վստահության ապահովման նպատակով սահմանված ինստիտուցիոնալ երաշխիքները ծառայեցրել է սեփական քաղաքական շահերի իրացմանը:

Մասնավորապես, ձեռք բերված տվյալների համաձայն, տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների ընտրության և առաջադրման գործընթացում շատ դեպքերում նախապատվությունը տրվել է ոչ թե համապատասխան մասնագիտական կարողություններ, փորձառություն կամ ընտրական գործընթացների նկատմամբ անաչառ վերաբերմունք ունեցող անձանց, այլ այն քաղաքացիներին, ովքեր նախապես համաձայնել են հանձնաժողովի կազմում ընդգրկվելու և դրա դիմաց նախատեսված վարձատրությունը ստանալու պայմանով ապահովել ինչպես իրենց անձնական քվեարկությունը, այնպես էլ իրենց ազդեցության շրջանակում գտնվող, իրենց կողմից հավաքագրված և վերահսկվող որոշակի թվով ընտրողների քվեարկությունը տվյալ քաղաքական ուժի օգտին:

Ընդ որում, նման անձանց ներգրավումը հնարավորություն է տվել միաժամանակ լուծել մի քանի խնդիր՝ ձևականորեն ապահովելով տեղամասային ընտրական հանձնաժողովներում քաղաքական ուժի ներկայացվածությունը, ընդլայնելով ընտրողների վրա ազդեցություն գործադրող անձանց ցանցը, ինչպես նաև ստեղծելով ֆինանսական միջոցների տրամադրման լրացուցիչ և արտաքուստ օրինական հիմքեր:

➢ Նույնանման մոտեցում է կիրառվել նաև վստահված անձանց ընտրության և նշանակման գործընթացում: Մասնավորապես, վստահված անձանց կարգավիճակ ստացած անձանց մի մասի ընտրությունը պայմանավորված է եղել ոչ այնքան ընտրական գործընթացներում քաղաքական ուժի շահերի պաշտպանության, որքան նրանց կողմից որոշակի թվով ընտրողների հավաքագրման, վերահսկման և քվեարկության կազմակերպման հնարավորություններով: Այդ անձինք, օգտվելով ընտրական գործընթացի շրջանակներում ստացած կարգավիճակից և համայնքներում ունեցած անձնական կապերից, ներգրավվել են ընտրողների հետ համակարգված աշխատանքի, վերջիններիս քաղաքական վարքագծի մշտադիտարկման, ինչպես նաև ընտրակաշառքի տրամադրման դիմաց ստանձնած պարտավորությունների կատարման վերահսկման գործընթացներում:

Այլ կերպ, ստացված տվյալները վկայում են, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների և վստահված անձանց ինստիտուտները մի շարք դեպքերում օգտագործվել են ոչ թե ընտրական գործընթացների օրինականության և թափանցիկության ապահովման նպատակով, այլ որպես ընտրողների հավաքագրման, ազդեցության ցանցերի ձևավորման և ընտրակաշառքի տրամադրման գործընթացները կազմակերպված եղանակով իրականացնելու և քողարկելու գործիքներ:

➢ Ընտրակաշառքի տրամադրման, դրա դիմաց ստանձնած պարտավորությունների կատարման վերահսկման և համապատասխան ֆինանսական հոսքերի քողարկման նպատակով կիրառվել են բազմաշերտ և փոխկապակցված մեխանիզմներ, որոնք միտված են եղել նվազեցնելու հանցավոր գործունեության կազմակերպիչների անմիջական ներգրավվածության տեսանելիությունը և դժվարացնելու դրանց բացահայտումը:

Մասնավորապես, մի շարք դեպքերում ընտրակաշառքի առաջարկների ներկայացման, դրամական միջոցների փոխանցման կամ բաշխման գործընթացներում ներգրավվել են այնպիսի անձինք, ովքեր որևէ առնչություն չեն ունեցել քաղաքական ուժերի, նախընտրական շտաբների կամ ընտրական գործընթացներում ներգրավված այլ կառույցների հետ, որն ապահովել է հանցավոր գործունեության իրական կազմակերպիչների ու կատարողների միջև լրացուցիչ միջնորդական օղակների առկայությունը:

Որոշ դեպքերում ընտրակաշառքի առաջարկները ներկայացվել կամ դրամական միջոցները փոխանցվել են կազմակերպիչների մերձավոր ազգականների, ընտանիքի անդամների կամ վստահելի անձանց միջոցով՝ նպատակ ունենալով հնարավորինս քողարկել քաղաքական ուժի կամ դրա ներկայացուցիչների անմիջական մասնակցությունը և հետագայում խուսափել պատասխանատվությունից:

➢ Բացահայտվել են նաև դեպքեր, երբ դրամական միջոցների տեղափոխման և բաշխման համար օգտագործվել են երրորդ անձանց պատկանող տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև ընտրվել են այնպիսի ժամային միջակայքեր, որոնք նվազեցրել են գործունեության նկատելիության աստիճանը:

➢ Ֆինանսական միջոցների ծագման աղբյուրներն ու շարժը քողարկելու նպատակով կիրառվել են նաև տարաբնույթ ֆինանսական սխեմաներ: Ստացված տվյալների համաձայն՝ առանձին դեպքերում ընտրակաշառքի տրամադրման համար նախատեսված դրամական միջոցները փոխանցվել են արտերկրում գործող բանկային հաստատություններում բացված քարտային հաշիվներից՝ փորձելով խուսափել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի միջոցով իրականացվող ֆինանսական հոսքերի նկատմամբ վերահսկողության հնարավոր միջոցառումներից:

➢ Բացի այդ, հայտնաբերվել են դեպքեր, երբ դրամական միջոցների հետագծելիությունը նվազեցնելու նպատակով ծրագրել են հավաքագրել տարբեր քաղաքացիների, ովքեր քաղաքական գործընթացներում ներգրավված չեն և որևէ տեսանելի առնչություն չունեն ընտրական գործընթացներին, որպեսզի վերջիններիս անվամբ իրականացվեն դրամական փոխանցումները՝ հետագայում դրանք կանխիկացնելու և որպես ընտրակաշառք բաժանելու համար: Արդյունքում, ստեղծվել է ֆինանսական միջոցների շրջանառության բազմաստիճան շղթա, որը նպատակ է ունեցել դժվարացնել դրամական միջոցների իրական տնօրինողների և վերջնական շահառուների նույնականացումը:

➢ Միաժամանակ, արձանագրվել են նաև ընտրակաշառքի տրամադրումն աշխատանքային հարաբերությունների քողի ներքո կազմակերպելու փորձեր: Մասնավորապես, որոշ դեպքերում նախատեսվել է դրամական միջոցները փոխանցել կազմակերպիչների հետ փոխկապակցված տնտեսավարող սուբյեկտների հաշվեհամարներին՝ կանխիկացնելու և ընտրողներին բաշխելու նպատակով:

Վերոգրյալ տվյալների համակցված գնահատումը ցույց է տալիս, որ ընտրակաշառքի տրամադրման գործընթացները կրել են ոչ թե մեկուսացված բնույթ, այլ եղել են կազմակերպված, նախապես պլանավորված և համակարգված գործողությունների ամբողջություն, որոնք կիրառվել են նույնական կամ էականորեն համանման սխեմաներով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

➢ Մի շարք վարույթներով տվյալներ են ստացվել այն մասին, որ ենթադրյալ ընտրական հանցագործությունների կատարմանը ներգրավված են եղել նաև այսպես կոչված «թաղային հեղինակություններ», ովքեր, նյութական շահի դիմաց, մի շարք դեպքերում գործել են որպես միջնորդական օղակներ՝ ապահովելով ընտրողների ներգրավումը և ընտրակաշառքի տրամադրման գործընթացների կազմակերպումը: Վերջինները ոչ միայն իրականացրել են ընտրողների հավաքագրում, այլև առանձին դեպքերում կիրառել են ուղղակի կամ անուղղակի ճնշման մեխանիզմներ՝ ստիպելով կամ պարտադրելով քաղաքացիներին մասնակցել քվեարկությանը և իրենց քվեարկությունը իրականացնել կոնկրետ քաղաքական ուժի օգտին:

Այսպիսով, ձևավորվել է բազմաշերտ ազդեցության համակարգ, որտեղ նախկին պաշտոնատար անձանց, տեղական հեղինակություն ունեցող անձանց և ոչ ֆորմալ

ազդեցության կենտրոնների համադրությամբ ապահովվել է ընտրողների վարքագծի վրա համակարգված ազդեցություն՝ զուգորդված ընտրակաշառքի տրամադրման և վերահսկման մեխանիզմներով: Նման համակարգի ձևավորումը, ըստ էության, նպատակ է հետապնդել նաև ապահովել հանցավոր գործունեության իրական կազմակերպիչների առավել հեռացվածությունն անմիջական գործողություններից՝ նվազեցնելով հանցավոր շղթաների ամբողջական բացահայտման հավանականությունը:

➢ Ընտրակաշառքի դիմաց ծրագրվել է արտերկրում բնակվող բազմաթիվ անձանց տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն: Ստացված տվյալների համաձայն՝ մի շարք դեպքերում ընտրակաշառքի առարկան չի սահմանափակվել միայն դրամական միջոցներով: Որպես շահագրգռման միջոցներ՝ կիրառվել են նաև արտերկրում արտոնյալ պայմաններով վարկային ռեսուրսների տրամադրման խոստումներ, ֆինանսական պարտավորությունների կարգավորման կամ վերաձևակերպման հնարավորություններ, ինչպես նաև առանձին դեպքերում՝ ընտանեկան բնույթի խնդիրների լուծմանն ուղղված միջամտություններ, այդ թվում՝ դատական գործընթացներում աջակցություն ապահովելու պարտավորություններ:

➢ Կատարվել են հարյուրավոր խուզարկություններ, որոնց ընթացքում հայտնաբերվել են ենթադրյալ ընտրակաշառք ստացած ավելի քան հազար անձանց վերաբերյալ տվյալներ պարունակող ցուցակներ, տարբեր գրառումներ և հաշվառումներ պարունակող նոթատետրեր, էլեկտրոնային կրիչներ, բջջային հեռախոսներ, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող այլ առարկաներ և փաստաթղթեր:

Հայտնաբերված նյութերի զննման, թվային խուզարկությունների և դրանց հիման վրա իրականացված հետագա քննչական գործողությունների արդյունքում ձեռք են բերվել զգալի ծավալի փաստական տվյալներ՝ ենթադրյալ ընտրակաշառքի տրամադրման չափերի, դրա բաշխման մեխանիզմների, ընտրողների հաշվառման և վերահսկման եղանակների, ընտրողներին ընտրատեղամասեր տեղափոխելու կազմակերպված սխեմաների, ընտրակաշառքի բաշխման գործընթացներում ներգրավված անձանց միջև առկա կապերի և փոխկապակցվածության, նրանց միջև հաղորդակցության միջոցների և կիրառված կազմակերպչական մեխանիզմների վերաբերյալ:

Ստացված տվյալները հնարավորություն են տվել վերականգնել ընտրակաշառքի տրամադրման գործընթացների առանձին դրվագներ, նույնականացնել գրանցում ներգրավված անձանց շրջանակը, ինչպես նաև բացահայտել ընտրողների հավաքագրման, հաշվառման, վերահսկման և քվեարկության կազմակերպման նպատակով կիրառված մի շարք մեխանիզմներ:

Նշված մեխանիզմների կիրառմամբ ընտրողների վրա ազդեցությունը իրականացվել է բազմաշերտ մոտեցմամբ՝ համադրելով ֆինանսական և սոցիալական բնույթի խոստումները, ինչը հնարավորություն է տվել ընդլայնել ազդեցության շրջանակը և ապահովել ընտրական վարքագծի նպատակային ուղղորդում:

Նկատի ունենալով, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթներով հայտնաբերվել են փաստական տվյալների այնպիսի համակցություն, որը ողջամիտ հիմքեր է ստեղծում սույն գրությամբ նշված քաղաքական ուժերի կողմից համակարգված կերպով հանցավոր մեխանիզմների կիրառման վերաբերյալ, ինչպես նաև

այն, որ պետության պոզիտիվ պարտականությունների պատշաճ իրականացումը պահանջում է պետական մարմինների միջև արդյունավետ համակարգում և տեղեկատվության շրջանառություն, ուստի

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ո Ւ Մ Ե Մ՝

Հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու նպատակով նախաձեռնել այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք հետայսու նվազագույնի կհասցնեն վերը նկարագրված հանցավոր սխեմաների կիրառման հնարավորությունը, այդ թվում՝ այդպիսի սխեմաներում ներգրավված քաղաքական ուժերի մասնակցությունն ընտրական գործընթացներին արգելելու եղանակով:

Հարգանքով՝

Ա. Ա. Նահապետյան
15.06.2026
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Ընտրական հանցանքների տարածվածությունն ըստ մարզերի և քաղաքական ուժերի՝ հանրային հետապնդում հարուցված վարույթներով

«Ուժեղ Հայաստան» - 28 մեղադրյալ
«Հայաստան Դաշինք» - 6 մեղադրյալ
«Բարգավաճ Հայաստան» - 6 մեղադրյալ

«Ուժեղ Հայաստան» - 23 մեղադրյալ
«Հայաստան Դաշինք» - 2 մեղադրյալ
«Բարգավաճ Հայաստան» - 28 մեղադրյալ

«Ուժեղ Հայաստան» - 2 մեղադրյալ

«Ուժեղ Հայաստան» - 11 մեղադրյալ
«Բարգավաճ Հայաստան» - 5 մեղադրյալ

«Բարգավաճ Հայաստան» - 2 մեղադրյալ
«Հայաստան Դաշինք» - 5 մեղադրյալ

«Ուժեղ Հայաստան» - 3 մեղադրյալ



«Ուժեղ Հայաստան» - 9 մեղադրյալ
«Հայաստան Դաշինք» - 3 մեղադրյալ

ԵՐԵՎԱՆ
«Ուժեղ Հայաստան» - 52 մեղադրյալ
«Հայաստան Դաշինք» - 4 մեղադրյալ

«Ուժեղ Հայաստան» - 27 մեղադրյալ
«Բարգավաճ Հայաստան» - 3 մեղադրյալ

«Ուժեղ Հայաստան» - 15 մեղադրյալ
«Բարգավաճ Հայաստան» - 4 մեղադրյալ

«Ուժեղ Հայաստան» - 9 մեղադրյալ
«Բարգավաճ Հայաստան» - 1 մեղադրյալ

Ընտրական հանցանքների տարածվածությունն ըստ Երևանի վարչական շրջանների և քաղաքական ուժերի՝ հանրային հետապնդում հարուցված վարույթներով